

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՄԱՆԵԼԻ ԲԱՐՁՈՒՆՔԸ (Հրաչյա Աճառյանի ծննդյան 130-ամյակի առթիվ)

Ա.Յու. Մարգարյան

հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Գիտնականներ կան, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել գիտության տվյալ բնագավառի լիարժեքությունն ու առաջընթացը: Հայ իրականության մեջ այդպիսի գիտնականներից է Հրաչյա Աճառյանը, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է մայրենի լեզվի ուսումնասիրությանը՝ ճանապարհի հարթելով հայրերավոր լեզվաբանների համար:

Հրաչյա Հակոբի Աճառյանը ծնվել է 1876թ. մարտի 8 (20)-ին Կոստանդնուպոլսում: Նախնական և միջնակարգ կրթությունը ստացել է տեղի Արամյան (1883-1885), Ս.Առնակյան (1885-1889) և Կեդրոնական (1889-1893) վարժարաններում՝ աշակերտելով Հ. Պարոնյանին, Ե. Տմիրճիազյանին, Մ.Չերազին, Գ.Արվանձոյանին և Ժամանակի հայտնի: այլ մտավորականների ու մանկավարժների: Երկու տարի ուսուցչություն անելով Պոլսում և Կարիքում՝ ապագա նշանավոր հայագետը 1895 թվականին մեկնում է Փարիզ՝ ուսումը շարունակելով Սորբոնի համալսարանում և Արևելյան կենդանի լեզուների դպրոցում, որտեղ աշակերտում է մի շարք լեզվաբանների, հատկապես նշանավոր հայագետ և հնդեվրոպաբան Անտուան Մեյեին, որն էլ նրա կյանքում բախտորոշ դեր է կատարում: Այստեղ նա ծանոթանում է տարբեր լեզուների և լեզվաբանության տարբեր բնագավառների: 1897 թվականին Փարիզում կայացած հայագիտական 11-րդ կոնգրեսում հայագետ Հյուբշմանը, լսելով Աճառյանի երկու զեկուցումները և ծանոթ լինելով վերջինիս՝ Փարիզի լեզվաբանական ընկերությանը ներկայացրած լազերենի ուսումնասիրությանը, հրավիրում է նրան Ստյապարոզ՝ լսելու իր դասախոսությունները հայերենի ծայնարանությունից: Խորհրդակցելով Մեյեի հետ և ավարտելով ուսումը Փարիզում՝ Աճառյանը մեկնում է Ստրասբուրգ և մի քանի ամիս աշակերտելով Հյուբշմանին ու լրացնելով լեզվաբանական կրթությունը՝ նույն թվականի ամռանը վերադառնում Կովկաս և շարունակում ուսման պատճառով ընդհատված մանկավարժական գործունեությունը: 1898-1902թթ նա որպես ուսուցիչ աշխատում է Էջմիածնում, 1902-1904թթ՝ Շուշիում, 1904-1906 և 1920-1923թթ՝ Թավրիզում, 1906-1907թթ՝ Նոր Բայազետում, 1907-1919թթ՝ Նոր Նախիջևանում, 1919-1920թթ՝ Թեհրանում՝ տարբեր տարիների դասավանդելով հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հին մատենագրության պատմություն, հայ նոր գրականության պատմություն, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, հաշվապահություն: 1923թ. արդեն մեծ ճանաչում ստացած գիտնականն ու մանկավարժը Թավրիզից հրավիրվում է Երևան՝ դասավանդելու նորաստեղծ պետական համալսարանում, որտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջին օրը՝ 1953թ. ապրիլի 16-ը, դասավանդում գրաբար, ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, լեզվաբանության ներածություն, համեմատական քերականություն, արևելյան լեզուների և արևելքի պատմություն, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն՝ իր գիտելիքները, գիտական և մանկավարժական հարստ տիրույթ ի սպաս դնելով լեզվաբանական տարբեր բնագավառների հետագա զարգացմանը, մեծապես նպաստելով գիտական բարձրորակ աշխատքի պատրաստմանը, որոնցից շատերը, շարունակելով մեծ ուսուցչի ավանդները, դարձան այդ բնագավառի սուսցատարները:

Աշխարհահռչակ լեզվաբանի գիտական և մանկավարժական ծառայությունները գնահատվել են ըստ արժանվույն: 1897թ. լազերենի ուսումնասիրության համար նա ընտրվել է Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, 1937թ.՝ Չեխոսլովակիայի Արևելյան ինստիտուտի գիտական բաժնի թղթակից անդամ, 1943թ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Թեհրան այդ ամենից վեր է այն շխարհող սերն ու հարգանքը, որ ունի հայ ժողովուրդը իր արժանավոր գավակի հանդեպ:

Առավել քեզմնավոր է գիտնական Աճառյանի գործունեությունը, որի անկապտելի մասն է կազմում բարբառագիտությունը: Մեծ հայագետի բարբառագիտական գործունեությունը սկսվում է աշակերտական տարիներից՝ ուղեկցելով նրան մինչև կյանքի վերջին օրերը: Այդ գործունեությունը ծավալվում է երեք հիմնական ուղղություններով՝ բառերի հավաքում, հայերեն բոլոր բարբառների տեղի, դիրքի և հիմնական հատկանիշների ոլորտում, բարբառային միավորների լիակատար

նկարագրություն: Դեռևս աշակերտական տարիներին նա կազմում է մայրենի Կ.Պոլսի բարբառի բառարանը, որին հաջորդում է դարձնակների օգնությամբ հայերենի գույժառական բառերի հավաքագրման աշխատանքը: 1902 թ. երեսուրակվում է բարբառագրական առաջին աշխատությունը՝ «Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ» վերնագրով, որը պարունակում է թուրքերենից, ինչպես նաև թուրքերենի միջոցով պարսկերենից, արաբերենից և այլ լեզուներից հայերենին անցած շուրջ 4200 բառ, որոնք գործածվում են Կ.Պոլսի, մասամբ նաև Նոր Նախիջևանի, Վանի և Ղարաբաղի բարբառներում: Աշխատության մեջ ցույց են տրվում թուրքերենից փոխառյալ բառերի ծագումը, ֆրանսերեն համարժեքը, հայերենում գործածության ստիմանները՝ առանձին նշաններով առանձնացնելով միայն հին սերունդներին հատուկ, հայերեն համապատասխան ձև ունեցող բառերը և նոր փոխառությունները: Բառարանին կցված ընդարձակ ներածականում հեղինակը ներկայացնում է թուրքական տիրապետության պատմությունը, հայ բարբառների դասավորությունն ու ազդեցությունը ըստ թուրքերենի ազդեցության առտիճանի առանձնացնելով երեք խումբ. ա) ամբողջապես թրքախոս հայեր, բ) ոչ թրքախոս հայեր, բայց որոնց բառապաշարում կգտնվի թուրքական բառերը, գ) բարբառներ, որոնց մեջ այդ կարգի բառերի թիվը համեմատաբար նվազ է: Մտան սկզբունքով է կազմված «Եվրոպական փոխառյալ բառեր հայերենի մեջ» բառարանը, որը թեև պատրաստ էր 1921 թ., սակայն տպագրվեց նախ «Հանդես ամսօրյայի» 1947-1950 թթ. համարներում և ապա առանձին գրքով (Վիննա, 1915): Այստեղ ընդգրկված է Պոլսի, ինչպես նաև Արաբկիրի, Ջոյուռնիայի, Վանի, Ղարաբաղի և որոշ այլ բարբառներում գործածված 860 բառ, որոնք փոխառություններ են խուլվորենից, ֆրանսերենից և ինդոպարսկան այլ լեզուներից:

Աճառյանի հաջորդ բառարանագրական աշխատությունը «Գավառական բառարան» է (Թիֆլիս, 1913), որի կազմման աշխատանքը սկսելով դեռևս 1890-ական թվականների սկզբին Պոլսի Կլեդոնական վարժարանում ուսանելու տարիներին, և հիմք ընդունելով Ա.Չուբանյանի Պոլսի բարբառի մի քանի հարյուր բառերի բառացանկը հետազայում հարստացրել է այն գրավոր բազմաթիվ աղբյուրներից և մասնագիտական գործունեության ճանապարհորդությունների ընթացքում հավաքած հազարավոր օրինակներով: Բառարանը պարունակում է շուրջ 30000 բառ ու դարձվածային միավոր, որանք հեղինակի վկայությամբ «հին մատենագրությամբ ավանդված չեն. կամ ավելի պարզ խոսելով՝ Վենետիկի առձեռն բառարանին մեջ չկան»¹: Բառարանում տեղ են գտել նաև հին մատենագրությամբ վկայված այն բառերը, որոնք հայերենի բարբառներում տարբեր իմաստներ են ձեռք բերել, ինչպես նաև օտար և սնվական բառադիպներով կազմված բաղադրությունները: Յուրաքանչյուր գաղափարական բառի մոտ նշվում է նրա գործածման վայրը, որոշ բառերի համար՝ նաև աղբյուրը, բառերի իմաստները հաստատելու համար բերվում են օրինակներ, իսկ որոշ դեպքերում կատարվում են բառակազմական և ստուգաբանական վերլուծություններ: Բառարանն ունեցավ լեզվաբանական, պատմական, ազգագրական խոշոր նշանակություն: Նրա շնորհիվ հազարավոր բառեր, փրկվելով կորստից, մտան շրջանառության մեջ. իսկ դրանց մի մասը մոտոց գործեց գրական հայերենի բառապաշարը:

Բազի գավառական և փոխառյալ բառերից Աճառյանը հավաքել է հին մատենագրությամբ ավանդված բառերի բարբառային ձևերը, որոնք տեղ են գտել «Հայերենի արմատական բառարանում»:

Մեծ բարբառագետը բառարանագրական աշխատանքներին զուգընթաց զբաղվում է հայերենի բարբառները ուսումնասիրելու քարոզ ու աշխատատալ առաքելությամբ՝ ծավալուն մենագրական ուսումնասիրությունների նյութ դարձնելով մեկ տասնյակից ավելի բարբառներ: 1898թ. տպագրվում է «Զեմություն Ասլաբնեկի բարբառին» ուսումնասիրությունը, որն արժանանում է նշանավոր եռյազմերն Մկելի, Հյուբշմանի, Լ.Մանդյանի, Գ.Խալաթյանի ուշադրությանը և խրախուսեցին, և որին հետևում են Սուլալայի (1899), Ղարաբաղի (1899-1901), Նոր Նախիջևանի (1925), Մարաղայի (1926), Նոր Ջուղայի (1940), Կ.Պոլսի (1941), Հաւնենի (1947), Վանի (1953), Աստուլի (1953), Կիլիկիայի (2003) բարբառներին նվիրված մենագրությունները: Այս և այլ բարբառներից տարիներ շարունակ հավաքած բարբառագիտական նյութերի հետազոտությունների ամփոփումը հանդիսացավ 1909թ. Փարիզում ֆրանսիյան լեզվով տպագրված «Հայերեն բարբառների դասակարգությունը» աշխատությունը, որը լրացված և վերաշխակված վերահրատարակվեց հայերեն՝ «Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների բարբառագիտական քարտեզով» խորագրով (1911): Այս

աշխատությունը հայ բարբառագիտության աստօշին ընդհանրացնող ուսումնասիրությունն է. որով հայ բարբառագիտությունը հիմնադրվեց որպես հայերենագիտության ինքնուրույն բնագավառ։ Լևոնյանը ուսումնական ծրագրերի մեջ։ Աշխատության ներածական բաժնում հեղինակը ներկայացնում է հայերեն բարբառների ուսումնասիրության վիճակը, բարբառագիտական ուսումնասիրությունների համատեղ պատմությունը, բարբառագիտական ուսումնասիրությունների ծրագրերը, գիտական այբուբենը, ուսումնասիրության եղանակները, աշխատության կազմությունը և այլ հարցեր։ Այնուհետև հանգամանքներ ներկայացվում են հայ բնակչության տարածման սահմանները, հայկական բոլոր գաղթօջախները, ինչպես նաև այն բնակավայրերը, որտեղ հայերը լրացրել են մայրենին՝ դառնալով օտարախոս։ Աշխատության բուն նպատակը հայ բարբառների ընդհանուր դասավորությունն է, դրանց սահմանների հնչյունաքերականական կարևոր հատկանիշների որոշումը։ Ըստ Աճառյանի՝ աշխարհագրական դասակարգումը չի բացահայտում հայերեն բարբառների բնույթագրերը, չի ներկայացնում տուրքեր բարբառաբանների առանձնահատկություններն ու բնորոշ հատկանիշները։ Ահա թե ինչու նա քննության է առնում բարբառների դասակարգման հիմունքի խնդիրը՝ գտնելով, որ դասակարգման գլխավոր հիմունքը պետք է բացահայտի բարբառների լեզվաբանական հատկանիշները, իսկ այդպիսի կարող են լինել կամ հնչյունաբանական հատկանիշները, կամ բառային, կամ էլ քերականական առանձին իրողություններ։ Աճառյանն ընտրեց քերականական-ձևաբանական դասակարգումը, որը բացահայտում է բարբառների էական տարբերություններն ու ընդհանրությունները և հնարավորություն է տալիս բազմաթիվ բարբառները միավորել մի քանի խմբերի մեջ։ Իբրև ձևաբանական դասակարգման հիմնական հատկանիշ՝ նա ընտրեց բայի սահմանական եղանակի ներկայի և անցյալի անկատարի կազմությունը, որին հիմնականում զուգադիպում է նաև ներգոյականի, մասամբ նաև բացառականի կազմությունը։ Այս սկզբունքով էլ նա իրեն հայտնի բոլոր բարբառները բաժանեց *–ում, –իր և –ել* ճյուղերի, որոնցից *–ում* ճյուղի մեջ մտնող բարբառները սահմանական ներկան և անցյալի անկատար կազմում են *–ում* վերջավորությամբ դերբայով, *–ել* ճյուղի մեջ մտնողները՝ *–ել* վերջավորությամբ դերբայով, իսկ *–իր* ճյուղի մեջ մտնողները *–իր* նախադար մասնիկով։ Դրանցից *–ում* ճյուղին հատկացվեց 7, *–իր* ճյուղին՝ 21, *–ել* ճյուղին՝ 3 բարբառ։ Գիտականորեն յուրաքանչյուր հայ բարբառների դասակարգումն ու խմբավորումը՝ Աճառյանն այնուհետև ներկայացնում է բարբառների ընդհանուր հնչյունաբանությունը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով բարբառների այն հնչյուններին, որոնք չկան գրական հայերենում և գրաբարում։ Աշխատության մեծ մասը նվիրված է հայերեն բարբառների նկարագրությանը։ 31 բարբառներից յուրաքանչյուրի նկարագրության մեջ նշվում են աշխարհագրական վայրը, բնակչության վիճակագրությունը, այդ բարբառին հարող բնակավայրերի անունները, նկարագրվում հնչյունաբանական և ձևաբանական կարևոր իրողությունները։ Վերջում տրվում են նմուշներ 102 խոսվածքներով։ Աշխատությանը կցված է 337 հայաբանական վայրեր ընդգրկող «Հայոց խոսած լեզուներու և բարբառներու քարտեզը», որտեղ առանձին պատմական նշաններով ցույց են տրվում բնակավայրի խոսվածքի ճյուղային պատկանելությունը, շրջակա լեզուների և հայերենի տարածման սահմանները։ «Հայ բարբառագիտության» ամփոփ շարադրանքն է կազմում «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորի «Հայերենի բարբառները» գլուխը, որտեղ բարբառների դասակարգման հարցի մասին խոսվում է ալիքի հանգամանորեն, քննվում են նոր բարբառներ, կատարվում որոշ վաղիխաղություններ ու ճշտումներ, իսկ «Շ դարի հայերեն բարբառները» և «Հայ բարբառների ծագման ժամանակը» գլուխները նվիրված են պատմական բարբառագիտության հարցերի քննությանը։ Նման անդրադարձ է կատարվում «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմաշառուր աշխատության մեջ, որտեղ քննության նյութ են դարձել մինչ այդ յուրումնասիրված բազմաթիվ խոսվածքներ։

Մեծ լեզվաբան ուսումնասիրել է նաև բարբառաբան հայ մանուկների լեզուն՝ ներկայացնելով 11 խոսվածքներում գործածվող 280 բառ, դրանց կազմությունն ու ծագումը, մանուկների լեզվի հնչյունաքերականական առանձնահատկությունները։

Աճառյանը դեռևս Փարիզում ուսանելու ժամանակ փորձառական հնչյունաբանության հիմնադիր Ռուսոյի լաբորատորիայում աշխարհեցի, նույնի, շուշեցի, սևբասաղցի, մշեցի բարբառաբանների և իր անձի վրա փորձառական մեթոդով ուսումնասիրության էր ներառվել համապատասխան բարբառների հնչյունաբանությունը, ծանոթ էր ֆրանսերենի

ունենալու և ուսումնասիրելի բոլոր հայ բարբառները առ տնայական, բայց նյութական միջոցներինց գուրկ լինելով, որչափից շարունակ փոխել պաշտոնավայրա»³։ Այդպիսով շուրջ 40 բարբառներից և հարյուրից ավելի խոսվածքներից հավաքած հարուստ նյութը և ուսումնասիրությունները, որանք ուղեկցող հանդիսացան հետագա բոլոր ուսումնասիրությունների համար։

Աճառյալնի հաճախորդ առավել խորությամբ դրսևորվեց «Հայերենի արմատական բառարանում», որը հեղինակի շուրջ քառասուն տարվա տրեւացան աշխատանքի այդպիսինքն է՝ դարագլուխ կազմող մի երևույթ, որի մասին հիացմունքով են խոսել նշանավոր շատ հայագետներ, այդ թվում՝ Անտուան Մեյեն և Նիկոլայա Մալը։ Բառարանը պատրաստ էր արդեն 1922 թվականին, սակայն աղագրվեց 1927-1935թթ.՝ ազգակնիւ աղանակով, յոթ հատորով, իսկ հետագայում՝ հրատարակվեց (1971-1979)⁴ չորս հատորով։ Սկսած 19-րդ դարի 70-ական թվականներին՝ հայոց լեզվի բառարանների ստուգաբանությամբ զբաղվել են բազմաթիվ նշանավոր հայագետներ՝ Լազարյոց, Հյուբմանը, Մեյեն, Պեղեքմանը, Լիդենը, Պատրուբանին, Պետերսանը և արիչներ, և արդեն 19-րդ դարի վերջին հայերենի ստուգաբանված բառերի թիվը անցնում էր երեք հազարից։ Հիմք ընդունելով այդ ամենը՝ Աճառյալը «Արմատական բառարանում» ընդված 10996 արմատից ներկայացրեց 5095-ի ստուգաբանությունը, որից 1668-ը արմատա իր ստուգաբանած բառերն են։ Բառարանի յուրաքանչյուր բառահոլված բաղկացած է 1) Բառագիտություն, 2) Ստուգաբանություն, 3) Ստուգաբանությունների պատմություն, 4) Գալական բառեր, 5) Հայերենից փոխառյալ բառեր բաժիններից։

Աճառյալնի բաժինը փաստորեն բառարանի բառագիտական, իմաստաբանական, բառակազմական բազմակողմանի ուսումնասիրությունն է՝ հնչյունափոխական օրինաչափություններով և հնչյունական տարբերակներով հարկելով։ Այստեղ իբրև գլխաբառ ընդվում է հայերեն արմատը, որից հետո արվում են նրա քերականական ձևերը, իմաստը, բառիմաստի զարգացման փուլերը, գործածություն հնագույն վկայությունները, այդ արմատից կազմված կարևոր բառերը, արմատի տարբեր գրությունները։ Օրինակները հիմնականում ընդվում են V դարի մնալույան շրջանի գրականությունից։ Բառարանի բուն լեզվաբանական մասը կազմում է բառահոլվածի ներկորդ բաժինը, որտեղ տրվում է արմատի ստուգաբանությունը։ Նախ ընդվում է հայկականական մնացյուն ձևը, այնուհետև նրանից առաջացած համապատասխան ձևերը գեղակից լեզուներում։ Յուրաքանչյուր լեզվից վկայություն բերելով՝ նշվում է, թե ինչ նշանակություն ունի արմատն այդ լեզվում և ինչով է այդ նշանակությունը կապվում հայերենի հետ։ Եթե արմատը փոխառյալ է, նշվում է փոխառու լեզուն, այդ լեզվում բառի գրությունը և իմաստը։ Բառահոլվածի վերջում հիշատակվում է տվյալ արմատի ստուգաբանությունն առաջին անգամ առաջարկված հեղինակի անմանը և նշվում աղբյուրը։ Երրորդ բաժնում ներկայացվում են շատուգաբանված և ոչ հավաստի ստուգաբանությունն ունեցող արմատները, նշվում առաջարկված բոլոր ստուգաբանությունները, դրանց հեղինակները և աղբյուրները, այլ կերպ տաած՝ այս բաժնում ամփափվում են բառաբանական ու ստուգաբանական բոլոր փորձերը հայ կամ օտարագի հեղինակների կողմից՝ V դարից մինչև բառարանի հրատարակության ժամանակը։ Չորրորդ բաժնում տրվում են բառի կամ բառարանի համապատասխանությունները հայերենի 30 բարբառներում, դրանց հնչյունական տարբերակները, իմաստային ու բառակազմական փոփոխություններն ու ձևափոխությունները։ Մատնագիտությամբ ամանդված մի շարք անստույգ բառերի ու ձևերի իմաստը բացահայտվում է հենց բարբառային տվյալներով⁵։ Հինգերորդ բաժնում քննվում է հայերենի ազդեցությունը այլ լեզուների վրա։ Այստեղ հեղինակն ամփափում է իր և արիչ գիտնականների ուսումնասիրությունների արդյունքները՝ հայերենից այլ լեզուներին անցած բառերի մասին։

1942-1962թթ. տպագրվեց հայ բառարանագրության ևս մեկ գլուխգործոց՝ «Անճանախները բառարանը»՝ հինգ հատորով, որն իրավամբ կարելի է համարել «արմատականի յուրովի շարունակությունը»⁶։ Այն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև XV դարը հայոց պատմության մեջ գործածված բոլոր անճանախները, որ կրել են հայերը, իսկ XV դարից հետո առնված են միայն պատմական և գրական նշանավոր անճերի անունները։ Բառարանը փաստորեն ստեղծված է բանասիրական-լեզվաբանական և պատմական-հանրագիտական սկզբունքների

համադրմամբ, որտեղ ներկայացվում են հայերեն անձնանունների լեզվաբանական-ստուգաբանական և պատմական-կիրառական բազմակողմանի և մանրամասն տվյալներ ու բնութագրումներ: Յուրաքանչյուր անվանը հատկացված է երկու բաժին, որոնցից առաջինում որպես գլխաբառ տրվում է անձնանունը, նրա ծագումը կամ ստուգաբանությունը, այդ անվան փառաքչական և ժողովրդական ձևերը: Եթե անունը օտար է, ներկայացվում են նաև նրա համապատասխան ձևերը մի քանի լեզուներով, ինչպես նաև այդ անունը կրող նշանավոր դեմքեր օտար լեզուներից և ժողովաբաններից: Երկրորդ բաժնում ժամանակագրական կարգով բերվում են այդ անունով հիշատակված անձնավորությունները, տրվում նրանց մեղմ և ամփոփ կենսագրությունը (եթե կան համապատասխան տեղեկություններ) և այն բոլոր աղբյուրները, որտեղ հիշատակված է այդ անձը: Հնդիսակը առավել մանրամասն է, գրում նրանց մասին, ովքեր պատմական դեմքեր են՝ գրող, պետական, հասարակական, զինվորական գործիչ, գիտնական և այլն: Այսպես Գրիգոր անունը գրականության մեջ հիշատակվում է 745 անգամ: Յուրաքանչյուրի մասին առեմձին խոսելով՝ Աճառյանը ընդարձակ հատվածներ է հատկացրել Գրիգոր Լուսավորչին, Գրիգոր Նարեկացուն, Գրիգոր Տղային և այդ անունը կրող այլ նշանավոր դեմքերին:

Աճառյանի հաջորդ խոշոր ուսումնասիրությունն է «Հայոց լեզվի պատմությունը» (I մաս, 1940, II մաս, 1951): Առաջին մասի առաջին գլխում (Հնդեվրոպական նախաշրջան) ամփոփվում են հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության բնագավառում շուրջ մեկ դարի ընթացքում ձեռք բերված աղբյուրները և ներկայացվում «հնդեվրոպացիների» մշակույթի, հնդեվրոպական նախալեզվի ու «նախահայրենիքի» ընդհանուր նկարագիրը: Այնուհետև քննվում են հայերենի ու ցեղակից լեզուների բառային ու հնչյունաքերականական բնագիտությունները, ինչպես նաև լեզվի պատմական զարգացման ընդհանուր խնդիրներ: «Հնդեվրոպական բարբառները և հայերենի դիրքը նրանց միջև» գլխում բերվում է հայերենի հնդեվրոպական բառերի (713 բառ) զանկը՝ նախալեզվի և ցեղակից ինը լեզուների համադրատախանի ձևերի նշմամբ, որից հետո դրանք դասակարգվում են ըստ զբաղմունքային բնագավառների: Դրանց հիման վրա մեծ լեզվաբանը բնութագրում է հայերի նախնական քաղաքակրթության մակարդակը, զբաղմունքը՝ որոշելով նաև ցեղակից լեզուների շարքում հայերենի դիրքը և մերձավոր առնչությունները: Հաջորդ գլուխներում պատմական հաջորդականությամբ ներկայացվում են հայերենի, թուրքերենի, փյուռգերենի, փորթախական լեզուների, խալդերենի, միտաներենի, հայաստանի այլ բնիկների և կովկասյան լեզուների, իրանական, հռոմեական, ասորական ազդեցությունները հայերենի վրա: Երկրորդ գրքում ներկայացվում են հունարենից, եբրայերենից, արաբերենից, վրացերենից, թուրքերենից, հին և նոր եվրոպական լեզուներից, ռուսերենից կատարված փոխառությունները: Յուրաքանչյուր նման ազդեցություն ներկայացնելուց առաջ հնդիսակը տալիս է պատմական տեղեկություններ այն պայմանների և հարաբերությունների մասին, որոնց հետևանքով կատարվել են այդ փոխառությունները: Բերվում են նաև փոխառյալ բառերի աղբյուրական զանկերը և դասակարգվում դրանք ըստ զբաղմունքային բնագավառների: Երկրորդ գրքում հնդիսակը առանձնափ ուշադրություն է դարձրել գրաբարի զարգացման տարբեր շրջաններին, միջին հայերենին, աշխարհաբարին, հայերենի բարբառներին՝ լեզվական հաշուստ փաստերով նկարագրելով՝ հայերենի՝ պատմական երկարատև ժամանակաշրջանում կրած փոփոխությունները:

«Հայոց լեզվի պատմության» մեջ Աճառյանը քննության չի առնում պատմական քերականության հարցերը՝ ընթերցողին գուշակեցնելով, որ քերականության պատմությունը թողնում է առեմձին և հանգամանակից քննության: Այդ քննությունը նա կատարեց «Լիակատար քերականություն հայոց լեզվի» համեմատությամբ 562 լեզուների՝ բազմաեռատոր աշխատության մեջ: Հատորների հերթականության խախտումով երկրորդ հատորն է կազմում «Ներածությունը» (1955), որը բաղկացած է երկու մասից՝ «Լեզվաբանության ներածություն» և «Լեզուների դասակարգություն»: Առաջին մասում Աճառյանը քննության է առնում լեզվաբանության այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝ լեզվի բնորոշումը, ծագումը, փոխանցումը, էվոլյուցիան, հատկությունները, հասարակական, հոգեբանական և բնախոսական կողմերը, երկրորդ մասում քննության են առնվում լեզուների ցեղակցությունը, լեզվաբնութանքները և նրանց բնորոշումը, լեզուների վիճակագրությունը և դասակարգումը, նախալեզուների վերականգնումը, ընդհանուր նախալեզուն:

Մյուս հինգ հատորներն ունեն միատևական կառուցվածք: Դրանցից յուրաքանչյուրում քննվում են մեկ կամ մի քանի խոսքի մասեր. ինչպես նաև խոսքի մասերի որոշ ընդհանրություններ: Առաջին հատորում (1952) քննության են ենթարկվում ածականը և թվականը, երկրորդում (1954)՝ դերանունը, երրորդում (1957)՝ գոյականը, չորրորդում (Ա գիրք. 1959, Բ գիրք, 1961 թ.)՝ բայը, հինգերորդում (1965)՝ դերբայը, նախդիրը և նախադրությունը, մակբայը, շակվապը, ձայնարկությունը: Վեցերորդ հատորում (1971) հեղինակը ներկայացնում է ձայնախոսությունը և ձայնաբխությունը:

Ամեն մի խոսքի մասի ուսումնասիրությունն սկսվում է ընդհանուր ներածական տեսությամբ տվյալ խոսքի մասի վերաբերյալ, այնուհետև առաջին հատվածում ներկայացվում է լեզվական տվյալ իրողության, տվյալ երևույթի ընդհանուր լեզվաբանական քննությունը՝ 562 լեզուների տվյալների հիման վրա: Հաջորդ հատվածը համեմատական լեզվաբանական հետազոտություն է հնդեվրոպական լեզվաբանության շրջանակներում: Երրորդ հատվածում, որը նվիրված է հայերենի համեմատական քերականությանը, նախ նկարագրվում է տվյալ երևույթը հնդեվրոպական նախալեզվում և նրա զարգացումը ցեղակից լեզուներում, որից հետո այդ իրողության զարգացումը հայերենում մինչև V դարը: Ուսումնասիրության վերջին հատվածը հայերենի պատմական քերականությունն է:

Հայ մեծ լեզվաբանը իր ուսումնասիրություններին գուրնթաց ողջ կյանքի ընթացքում զբաղվել է մատենագրությամբ՝ նախանձելի հմտությամբ ու պարտաճանաչությամբ տասնյակ գիտական աշխատությունների մեջ ներկայացնելով նաև խնդրի հարցի շուրջ մինչև այդ եղած գրեթե բոլոր ուսումնասիրությունները: Պատահական չէ, որ նա համարվում է «առնչամատենագետ լեզվաբան»⁶՝ հայ լեզվաբանության մեջ: Մատենագիտական տեղեկատվությունը Աճառյանի ուսումնասիրություններում արտահայտվում է մատենագիտական հղումների, տեղադրումների, գրականության գանկերի ձևով: Մատենագիտական հղումներով գերիազնված է «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմախտոյալը, որի էջերում վկայաբերվում են շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հայերենի համեմատական ու պատմական քերականությանը նվիրված ուսումնասիրություններն ու բազմաթիվ ուսումնասիրողների կարծիքները, իսկ ներածության մեջ շարադրվում են ուսումնասիրվող հարցերի մասին եղած տեղությունները, վեր հանվում դրանց արժանիքների և թերությունները: Այդ տեսակետից ուշագրավ են նաև «Հայոց անձնանունների բառարանը» և «Հայերենի արմատական բառարանը», որոնցից առաջինին կցված է շուրջ 340 նյութից բաղկացած մի ընդարձակ գանկ, չնայած օգտագործված տվյալի և ձևագրի աղբյուրների թիվը մի քանի անգամ գերազանցում է դրան, երկրորդում ընդգրկված են շուրջ 1200 համառոտագրություններ, որոնցով նշված են միայն օգտագործված գրքերի և պարբերականների, իսկ արմատների մեկնաբանության «Մոռվաբանությունների պատմությունը» բաժնում զետեղված են դարերի ընթացքում արված բոլոր ստուգաբանական քննությունները և նույնիսկ դիտողությունները:

Մի շարք ուսումնասիրություններում օգտագործված աղբյուրների մասին տրվող տեղեկությունները վեր են ածվում մատենագիտական տեսությունների: Նման քննյթ ունեն «Գավառական բառարաններու պատմական» հատվածը՝ «Հայերենի գավառական բառարանի» առաջաբանում, «Հայ բարբառագիտության պատմությունը» հատվածը՝ «Հայ բարբառագիտություն» աշխատության ներածականում, ինչպես նաև «Հայոց գրերը» (1984) աշխատության առաջին մասը՝ «Աղբյուրներ և նրանց քննությունը» խորագրով: «Մատենագիտություն» վերնագրով առանձին բաժիններ ունեն Աճառյանի բարբառագիտական մի շարք մենագրություններ, իսկ որոշ աշխատություններ օժտված են առանձին գլուխների կցված աղբյուրների գանկերով:

Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ շարունակելով հայ դասական բանասիրության, հատկապես Մխիթարյան հայրերի ավանդույթները՝ Աճառյանը գրեթե իր բոլոր աշխատություններում անհրաժեշտ է համարում տևյալ պաշին, թե ուսումնասիրության ընթացքում ինչ աղբյուրներից է օգտվել, և ընդհանրապես ինչ ուսումնասիրություններ կան տվյալ հարցի շուրջը:

Աճառյանի հավաքած մատենագիտական բոլոր նյութերի նշված բոլոր գանկերի ետնադուրսարն է կազմում «Հայ լեզվաբանական մատենագրություն» անտիպ աշխատությունը, որտեղ ընդգրկված են հայերեն և օտար լեզուներով աշխարհի տարբեր տեղերում 17-րդ դարի

վերջից մինչև 20-րդ դարի 40-ական թվականները տպագրված շուրջ 4000 գրքեր, հատվածներ, հոդվածներ, որոնց մասին տևողակ էր հեղինակը, և որոնք այս կամ այն կերպ տնչվում են հայերենին: Եթե սրան ավելացնենք տարբեր տարիների Կարինում, Թավրիզում, Թեհրանում, Նոր Բայազետում, Էջմիածնում ուսումնասիրած հազարավոր ծնագրերի ցուցակների կազմումը և երատարակումը, ապա իրավամբ կարող ենք Աճառյանին բնութագրել նաև որպես մեծ մատենագետ:

Այսքանով չեն սպառվում աշխարհառակ լեզվաբանի ուսումնասիրությունները: Նա հեղինակ է երկու հայտնիքի ավելի տպագիր և անտիպ ուրիշ աշխատությունների, հոդվածների, գրախոսությունների, որոնց մի մասն առնչվում է հայ գրականության պատմությանը և փնտրությանը, հայ ժողովրդի պատմությանը, արևելքի պատմությանը, հայ բանահյուսությանը և այլ բնագավառների:

Առանձնակի արժեք ունի նաև «Ելանքիս հուշերից» (1967) աշխատությունը, որտեղ Աճառյանը իր կենսագրությանը գուցեթագ արժեքավոր տեղեկություններ է տալիս Մառի, Նուբեյանի, Մելիքի, Պարոնյանի, Հովհաննիսյանի, Խրիմյան Հայրիկի, Աբեղյանի, Կոմիտասի, Մանանյանի և հայ ու օտարագրի բազմաթիվ ուրիշ գիտնականների, գրողների, մանկավարժների, հասարակական գործիչների մասին՝ մանրամասն ներկայացնելով նաև իր այցելած երկրները, գավառները, քաղաքները, գյուղերը, նրանց բնակիչների կենցաղը:

Ամփոփում

Հոգվածում բնութագրվում է հայ լեզվաբանության մեծագույն ներկայացուցիչ Հրաչյա Աճառյանի վանկավարժական, լեզվաբանական և մատենագրական գործունեությունը: Հայ բանավորության և պատմագրության համար մեծ արժեք են ներկայացնում նրա այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են «Հայ բարբառագիտություն», «Գավառական բարբառ», «Հայերենի արմատական բարբառ», «Հայոց անձնանունների բարբառ», «Հայոց լեզվի պատմություն», «Լիակատար բերականություն հայոց լեզվի՝ համեմատությանը 562 լեզուների»: Աճառյանը նաև հեղինակ է ավելի քան 200 տպագրված և անտիպ գիտական աշխատանքների, որոնց մի մասը վերաբերում է գիտության այլ բնագավառների:

Резюме

В статье характеризуется педагогическая, лингвистическая и библиографическая деятельность крупнейшего представителя армянского языкознания Рачья Ачаряна, 130-летие со дня рождения которого исполнилось в марте этого года. Для армянской филологии и историографии, большую ценность представляют такие его труды, как “Армянская диалектология”, “Армянский диалектологический словарь”, “Корневой словарь армянского языка”, “Словарь армянских личных имен”, “История армянского языка”, “Полная грамматика армянского языка в сравнении с 562 языками”. Ачарян также является автором более 200 напечатанных и ненапечатанных работ, часть которых относится к иным сферам науки.

Ծանոթագրություններ

1. Տե՛ս Հր.Աճառյան, Հայերեն գավառական բարբառ, Թիֆլիս, 1913, էջ 18:
2. Տե՛ս Հր.Աճառյան, Մանկական բարբառ, Բանասիր, Փարիզ, 1901, N3, պրակ Ա:
3. Տե՛ս Հր.Աճառյան, Ելանքիս հուշերից, Երևան 1967, էջ 438:
4. Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլաս, հ.1, Երևան, 1982, թջ 52-53:
5. Տե՛ս Ա.Ս.Ղաբիրյան, Հայ լեզվաբանության խոշորագույն ներկայացուցիչը, Պատմաբանասիրական հանդես, 1966, էջ 18
6. Տե՛ս Ա.Հարությունյան, Աճառյանը մատենագետ, Բանբեր Երևանի համալսարանի, 1986, N3, էջ 36: